

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարիկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարիկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 քենդ

ՍԱՆԻՏԻԿ



ՊԵՏԱԿԱՆ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՄԱՐՏ. 24 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 206

ՏԽՐՈՒՆԻ

ՏՕՔԹ. Կ. ՍԹՈՅԼՕՑ

Անցեալ շաբթու Պուլկարիա մեծ կորուստ մը ունեցաւ յանձին Ազգային կուսակցութեան պետ եւ նախկին նախարարապետ Տօքթ. Սթոյլօֆի, որ հինգօրեայ հիւանդութենէ մը ետքը հանգաւ իւտէր 47 տարեկան հասակին մէջ:

Յուզարկաւորութեան տղուր հանդէսը կատարուեցաւ Սօֆիայի մէջ, նմանը քիչ տեսնուած փառաւոր կերպով, որուն ծախքը կառավարութեան կողմէ եղաւ և Սուպրանիէն անցեալ շաբաթ օրը ի նշան սգոյ իր նիստը դադարեցուց:

Հանգուցեալը իր ազգին շատ գնահատելի ծառայութիւններ մատուցած է և Հայոցս նկատմամբ ալ շատ մտքաւոր գոնուած է: 1896ին Հայկական կոտորածին ժամանակ երբ 20,000 Հայեր Պուլկարիա ապաստանեցան, Տօքթ. Սթոյլօֆի որ այն ատեն նախարարապետ էր, իրաջօժար ընդունեց Հայ գաղթականութիւնը եւ երախտապարտ թողուց ամենքնին:

Սօֆիայի ազգայինք զեղեցիկ ծաղկեփունջ մը դրած են անոր դադարին վրայ եւ եկեղեցւոյ զանգակն ալ ի նշան սգոյ տխուր կերպով զարնուեր է մինչեւ թաղման արարողութեան վերջը:

Երախտագիտութեան խորին զգացմամբ Պուլկարաբնակ Հայերս կ'օրհնենք անոր յիշատակը և կը մաղթենք որ Պուլկարիա Տօքթ. Սթոյլօֆի արժանաւոր յաջորդներն ունենայ:

ԱԶԳԱՅԻՆ

Վեհ. Կաթողիկոսը էջմիածնայ վանքին պէտք եղած մէկ քանի Սրբոց պատկերներ պատրաստել տալու համար Պոլսէն էջմիածին հրաւիրած է ծանօթ նկարիչ Պ. Ֆէթվաճեանը, որ Մայիսին ճամբայ պիտի ելնէ դէպի Թիֆլիզ:

—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Ազգ. Հիւանդանոցը Որբանոցին մէջ Երկրագործական դասընթացքի մը սկզբնաւորութիւնը եղած է և չորս մասնագետներ ստանձնած են ուսուցչութեան պաշտօնը:

—Յունվար 24ին Երուսաղիմայ Ս. Յարութիւն տաճարի տարեկան լուացման ժամանակ, երբ Հայերը Պատանաւորներին առջեւ սիւնը կը լուան եղեր, Յոյները կը յարձակին Հայերուն վրայ և կռիւի մը տեղի կուտան, որուն մէջ Հայերէն 5 հոգի կը վիրաւորուին, մէկը շատ ծանր:

—Խարբերթի եփրատ գօլէճը իր հաստատութենէն ի վեր, քանիհինգ տարուան միջոցին 109 արու և 78 էգ չրջանսւարաններ ունեցած է:

— Կարակէօզեան Գրիգոր Էֆ. այս անգամ Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենայետ Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեանի յանձնած է 20,000 ոսկիի կտակին միամեայ տոկոս 600 ոսկին:

— Պէրպէրեան բարեհամու վարժարանին 25ամեայ յոբելեանին առթիւ իւր նախկին աշակերտները հանգանակութեան գիւմած են: Ս. Պատրիարքը 10 օսմ. ոսկի ստորագրուեր է:

— Աղերսանդրիաբնակ ազգային մը 100 անգլիական ոսկի նուիրեր է Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին, փափագ յայտնելով որ յիմարանոցին մեջ յարկ մըն ալ աւելցուի: Նուիրատուն պայման դրեր է որ իր անունը չհրապարակուի:

— Ս. Պատրիարքը Պոլսոյ և գաւառական առաջնորդաց Զատիկ առթիւ շրջաբերականներ ղրր կած է որպէս զի բանտարկեալ ազգայնոց համար եկեղեցիներու մէջ յատուկ պնակներ շրջագային և անոնց հասոյթը անմիջապէս նոյն նպատակին գործածուի:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

• • • Խմբագիր

«Հայերի» 205 չև «Իրաւունք» 23 թիւերուն մէջ յօդուած մը կարդացինք որուն տակ կ'ստորագրէր Պաղտատար Յովհաննէսեան վանքի: Այդ պարոնը յայտնի կազմակերպութեան մը 2 անդամները դատարկաշրջիկ տնտեսած էր և դատապարտած անոնց դրամ հանգանակելը: Ինքզինք ժողովուրդի հարազատ զաւակը և անոր շահերու անկեղծ պաշտպանը հռչակելու լուրջով: Արդ այդ անձը լաւ մը ճանչնալու դժբաղդութիւն ունենալով եւ չուզելով ժողովուրդն ու ժամուրը զբաղեցնել իրմով և իրեն դրուածքովը, կառաջարկեմ Պ. Պաղտիկին հրաւիրել իւր յօդուածը տպագրող խմբագիրները նոյնպէս եւ «Հարժում» խմբագիր և բա-

նի մը չէզոք մարդիկ ու զիս բանի մը վկաներովս, որպէս զի այդ յանձնախումբի մէջ (*) որոշուի թէ ի՞նչ է վանքի Պաղտիկը եւ որչափ կարողութիւն ունի հասկընալու մեր ազատագրութեան գործը, որուն ջերմ պաշտպան կուզէ հանդիսանալ:

ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍԵԱՆ

Վառնա 26 Մարտ

Նորէն Վանքի

Յ. Գ. Ներսիսէն սէկմէկ օրինակ ալ Իրաւունքի և Հարժումի զրկած է տպագրելու:

(*) «Հարժում» խմբագիրը ձեր այս առաջարկը չընդունիր, անշուշտ վախնալով որ Պ. Պաղտիկ Յովհաննէսեան իր ըսածները երկու խմբագիրներու ներկայութեան ալ պիտի հաստատէ, ինչ որ մեծ «պատիւ» մը պիտի ըլլար այդ մեծանուն «խմբագրապետին»:

Բոժոժիկ. — Ես ըլլայի նէ՝ աս երկու խմբագիրները պզտիկ ձգելու համար վաղելով կերթայի առաջարկուած Յանձնաժողովին, անկէ տրուելիք պատուանշանն ալ (?) կուրծքիս վրայ փառաւորապէս կ'ախելու համար:

Վառնա հրատարակուող Իյթօյնի Դրացի անուն Պուլկար Թերթի վերջին թիւոյն մէջ, Մակեդոնական Ընկերութեան տեղոյս Մասնաճիւղին կողմէ պաշտօնական նամակ մը և խմբագրական դիտողութիւն մը հրատարակուած է, որ բռնի դրամ պահանջող հայերու եւ օտարազգիներու ընթացքին «առաջակութիւն» անունը կուտայ:

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

Մ. Ս. Ֆիլիպէ. — Հայերի ուղղութեանը մասին ձեր և ձերիներուն կողմէ յայտնուած համակրանքին համար մեր շնորհակալութիւնները:

Կայծակ. Պուրկաղ. — Կարեորութիւն չունի, որովհետեւ աշխարհ գիտէ թէ գողերու, սրիկաներու և առաւ-փախաւներու առաջին գրամագլուխն է հայհօյնը զոր կ'ուզեն զիրենք հալածողներուն:

Ա. Մ. Կ. Գահիրէ. — Ձեր պատասխանին կը սպասենք:

Թ. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարեհէն լեզուի

Գին 1 Քր.

Դիմել Հայերի խմբագրութեան:

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆԻՆ ՀԱՒԿԻԹԸ

(ԱՒԱՆԴԱՎԵՊ)

Կար ու չկար՝ հաւկիթ մը կար, որուն կեղեին վրայ գրուած էր «Զօրութիւն»։ Խիկար այս հաւկիթով ստակ կը վաճակէր, ու բոլոր աշխարհ զարմացած էր թէ ի՞նչպէս առ հաւկիթը այնչափ հաւկիթներու զարնուելով չէր կոտորեր։

Հաւկիթին այս համբաւը գիւղապետը լսելով՝ բռնի գրաւեց զայն, որով մարեց մեր Խիկարին մօտը, վասն զի հաւկիթը Խիկարի համար շահու մեծ աղբիւր մըն էր։ Երբ այսպէս տրամաւթեամբ կը մոմտար, իր փոքրաւորը ըսաւ թէ «Տէր իմ, ի՞նչ կուտաս ինձի, թէ որ հաւկիթդ բերեմ»։

— Հարիւր ոսկի։ (Պօլ քէտէէն)։

Փոքրաւորը անմիջապէս զնաց գիւղապետին հասկցուց թէ՛ առ հաւկիթէն ելլելիք ձագը տարին երեք անգամ երեք չորս գոհարներ կը ծըրտէ, սակայն հաւկիթին վրայ նստող թխամարը պահելու եղանակը ինքը միայն գիտէ, այսինքն ինքն այդ բանին վարպետն է։

— Շատ աղէկ, ուրեմն դուն այսուհետեւ իմ թանկութիւնս պաշտնաւոր ես։ Ըսաւ գիւղապետը ու զայն իր քովն առաւ։

— Փոքրաւորը հաղիւ թէ տո՛ւս մը կեցաւ, ըրաւ չըբաւ օր մը հաւկիթն առնելով փախաւ եւ բերաւ Խիկարին։ Փիւղապետը բարկանալով հրաման ըրաւ որ հաւկիթն ու գողը գտնուին։ Կոտոր վրայ հաւկիթին համբաւը աւելի տարածուեցաւ։ Խիկար ու փոքրաւորը ճամբայ ինկան, քիչ գացին շատ գացին՝ գիշեր մը հրէի մը տուն հիւր եղան։ Հրէայն կողոպտել ուզելով, բայց հաւկիթէն զատ բան մը չգտնելով անոնց վրայ՝ բարկացաւ և փոքրաւորին ըսաւ թէ, «Ես զքեզ գիւղապետին հաւնոցը տեսեր եմ, սա հաւկիթին գողտնիքը ինձի ըսելու ես, չէ՞նէ զքեզ կը մատնեմ»։

Փոքրաւորը նախաճառ մնալով սուտ մ'ալ կը չինէ, ըսելով «Աս հաւկիթը նոյն հասկանքին տապանէն մնացած անթիքա մ'ընէ»։ Հրէայն լսելով զայս՝ ոսկի ապարանջանի մը հետ կը փոխանակէ իրեն ծանօթ հրէայ անթիքաճի մը տալով, բայց գէշն ան էր որ՝ այս ապարանջանն ալ գողունի էր, այսինքն կուսակալին պալատէն գողցուած էր, ուստի երբ այս ագահ հրէայն շուկան ծախելու կըլլայ զայն՝ կը բռնուի և կը բանտարուի։ Հարցաքննութեան մէջ հաւկիթին պատմութիւնը երեւան կ'ելնէ։ Կուսակալը անմիջապէս հրաժան կ'ընէ որ հաւկիթը իրեն բերուի։ Հաւկիթին բերուելը մեծ բան մը չէր՝ Խիկարին

բռնուելը գէշ էր, սուտ մ'ալ չինել պետք էր հիմա, ուստի այս անգամ ինքն Խիկար վայնաչար մնալով կըսէ. — Տէր իմ, հաղար բեռ աւետարան վկայ, վեց ամիսէն այս հաւկիթէն հրեշտականման Հիւրիւ աղջիկ մը պիտի ելնէ, թէ որ ըսածս սուտ ըլլայ՝ սպաննէ զիս, միայն թէ հաւկիթը անութիդ (գօղթուգ) տակ պահելու ես։

Սուտը գէշ չէր, սակայն Խիկարի մտածմունքը սուտին հետեւանքին վրայ էր, ի՞նչպէս ինքզինքը պիտի ազատէր։

Վեց ամիսը լրանալու վրայ էր, Խիկարի հոգին ալ ելնելու վրայ էր, բայց բաղդը առ անգամ ալ Խիկարի օգնութեան պիտի հասնէր այնպիսի կերպով մը՝ որու վրայ ոչ թէ միայն Խիկար պիտի զարմանար այլ եւ հայելիի ընթերցողը ալ պիտի զարմանան։

Պայտնածամի վերջին օրը յանկարծ աղախին մը Խիկարի խցիկը մտնելով կը հրամայունէ զինք դադարուի կուսակալին կնոջ սենեակը։ Երբ կը ներկայանայ՝ կուսակալուհին զունաթափ եւ շփով վիճակի մէջ կը հարցնէ։

— Իրա՞ւ, Խիկար, վաղը ադ հաւկիթէն աղջիկը պիտի ելնէ, կերդ մնցնեմ զքեզ, չիտակը ըսէ։

Խիկար գողալով ի՞նչ ըսէ. — Հրաման եք, այո՛ւ, պիտի ելնէ։

Կուսակալուհին մտածելով որ եթէ այդ հաւկիթէն հիւրիւ աղջիկը ելնէ՝ ամուսինը անոր պիտի հաւնի եւ ինք երեսէ պիտի իյնայ՝ նոյն գիշերը կը յաջողի կուսակալը գինովցնել, հաւկիթը գողնալ եւ Խիկարի յանձնել, ըսելով։

— Հաւկիթդ ալ դուն ալ գետինն անցէք, ա՛ւ սա ոսկիները, վարը ախոռէն ձի մ'ալ պիտի տրուի քեզ, փախի՛ր այս քաղաքէն, կորսուէ՛, գնա՛։

Խիկարի ուղածն ալ այս էր։

Յաջորդ օրուան առաւօտուն երբ կուսակալը հաւկիթը կը փնտռէր՝ ճարպիկ կինը խնդալով մը կըսէ. — Սիրելիս, հիւրիւ աղջիկը քեզ հաւնած ըլլալու չէ որ Խիկարի հետ փախեր է։

Կուսակալը ալ բան գործ չունի նէ՝ թող բնտուէ ու բնտուէ այդ հիւրիւն, իսկ մենք Խիկարի վարպետութենէն կը տեսնենք թէ՛ չնչին հաւկիթ մը ի՞նչ գերեր կը խաղայ մարդկային կենաց մէջ։

Վ. Վ.

Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ»-ի Հինգերորդ տետրակն ալ 20 տետրին բաժնեդիրն է Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման 2ու կէս ֆր. կանխիկ։

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԸ

ԲԱՐԲԱՐԻԿ ԲԱՐՔԵՐ

Ամէն ժողովուրդ ունի իր գնչուններու, բոշաներու դասակարգը, որ իր սյուանդակ սովորութիւններով ու տարօրինակ կենցաղով, նոյն ազգին, նոյն ժողովուրդին հնադարեան բարքերը կը յատկանշէ: Ասոնք տաղաւարներու տակ, հեռու իրենց ցեղակիցներէն, մենիկ ու թափառիկ կեանք մը կանցնեն: Մասնաւորելով խօսքս Հայ բոշաներու վրայ, ասոնք ստուար թիւ մը կը կազմեն Պոյապատի, Պալքէսէրի ու Էղինէյի կողմերը: Հայ բոշան գիւղերէ խեղանդամ, կապ ձիեր, էջեր գնելով, զանոնք կը դարմանէ ու յետոյ կրկնապատիկ գիններով ծախելով իր ազրուստը կը ճարէ: Իսկ Հայ բոշայուհին, համբարատար ոգւով, երկար բարակ խալքարներ, մազեր շինելով, ուր կը նետէ զանոնք, եւ թողլով իր ծննդավայրը, հետիոտն գիւղէ գիւղ կը շրջի, եւ իր լեզուանիւթեամբը քիչ ժամանակէն զանոնք դրամի կը վերածէ: Հունձքի ատեն նա մանաւանդ այս խալքարի խնդրանքը խիստ կը շատնայ: Հայ բոշայուհին աւելի գործունեայ ու աշխատասէր է, քան Հայ բոշան: Նայուածքնին սարսաղդեցիկ, խօսուածքնին բարձրաձայն է, եւ իրենք գիւրաղգած են: Մուկեղու, լայնաբերան են: Հայախօս ալ են և մարդ կը հետաքրքրուի անոնց խօսած Հայերէնով: Իրենց հագուստն ու կապուստը տարօրինակ ձեւ մը ունին: Այրերը մինչեւ սրունքնին գրգռազ մը, խիստ կարճ կոճակազարդ ենթաբի մը կը հագնին, ու վրան երիզով ծաղկազօծուած ճաւաղաձաձ մը կանցնեն, մէջքերնին կը փաթթեն 5-6 մեղր երկայն կարմիր գօտի մը ու յիշակոյց մը, որուն մէջ կրակ վառելու միշտ պատրաստ կը դնուի արեւի լայնքար մը, երկայնածոյ գլխարկ մը կը գնեն գլուխնին, որ միշտ իրենց ուր կը ձեռնէ ու վրան կը փաթթեն հունազեղ բեհեզ մը: Իսկ կիները, իրենց հասակն ի վար երկայն ենթաբի մը կը հագնին, վիզերնին կը զարդարեն սարգիւններով (ակաթ) իրենց մանուկները տոպրակի մը մէջ դնելով ետեւնին կը կապեն, եւ ուր որ երթան զանոնք մէկտեղ կը տանին: Իրենց անունները ընդհանրապէս Զիւմպիւլ, Մէնէվլէ, Էլմաս ևլն. են: Հայ բոշաները իրենց ուղեւորութեան միջոցին բացօթեայ տեղեր կը գիշերեն ու առանց վախճալու պուրակներու վրայ կեցնեն ու մշիկ մշիկ կը քնանան:

Հարսանեկան բարքերնին խիստ հետաքրք-

րաշարժ է: Հարսնիքին տեւողութեանը միջոցին հրացան, ատրճանակ կը պարպեն շարունակ: Կրուիւր անպակաս է: Գլուխներ կը պատռեն, փորեր կը ճեղքուին եւ արիւնով կը ներկուի հարսնետունը: Գաւառական խաղեր կոլորեն եւ կոստոստեն անյապաքար: Խլացուցիչ պողպատեքներ կարճակեն, եւ օդի աղբեցութեան տակ, ներկաներուն ծիծաղը շարժելու աստիճան միմիտութիւններ կրնան:

Հարսին ծննդաբերութեան միջոցին, սենեկին մէջ հրացան կը պարպեն, որպէսզի մանուկը մօրը արգանդին մէջ լսելով ձայնը, շուտով լոյս աշխարհ ճամբորդէ (?): Խեղճ հարսին գէմքը կը դալկանայ եւ գողահար գետին կը փռուի, արտաշարժ ճիշեր արձակելով, նորածինները, շատ անգամ 6 ամիս առանց մկրտութեան կը մնան: Դիպուածու եթէ իրենց մէկ կենդանին գողցուի, ձի նստելով կը հետապնդին անոր եւ գտնելով գողը, չարաչար կը պատժեն: Ու եթէ գողը ձեռք չկրնան ձգել, կախառան ու կը սկըսին մէկմէկու հետ կռուիլ: Իրենց մէջ կը դժուարութիւն հարուստներ: Բարեպաշտ ալ են, եկեղեցւոյ պապ պապ մարմարները առանց ձանձրանալու կը ծռին կը համբուրեն:

Խիստ նախասպառեալ են սակայն: Դեռ այն հաւատքը ունին թէ գեւեր, յաւերժահարսեր, հուրիներ կը դտնուին: Թէեւ ասոնք երկիւղ չեն աղբեր իրենց, բայց շատ անգամ այս պատճառաւ գեւեր հալածելու համար օգը հրացան կը պարպեն տղիտաբար: Տօն օրեր իբր ժամանց կը մենամարտին իրարու հետ, և յաղթանակը շահողը տիպար մարտագիր անունով կը մկրտեն, ու մինչեւ վերջը այդպէս կը յորջորջեն:

Ահա Հայ բոշաներու բարքերէն բրդուն մը, որ կարծեմ պիտի հետաքրքրէ անոնց բարքերու ուսումնասիրութիւնովը զբաղող բանասէր դասակարգը:

Սուրհանդակ

Ս. Զ.

ՁԻՆԱԿԱՆ ՃԱՇ ՄԸ

Ծովային սպայ մը կը պատմէ թէ իր Ձինաստանի մէջ ըրած վերջին ճամբորդութեան միջոցին, բազմաթիւ ընկերներով ճաշի հրաւիրուեցաւ Լի-Հունկ-Չանկի կողմէ, որ զանոնք շքեղ կերպով ընդունեց սրահի մը մէջ, ուր կը դտնուէր իր նախնիքներէն մնացած եւ կարծր փայտի վրայ քանդակուած փոքրիկ սեղան մը, զարդարուած նրբաճիւղ ծառերով: Ահա թէ ինչէ՞ կը բազկանար ճաշը.— Հրամցուեցաւ նախ կրիայի եւ ծիծառներու բոյներու (?) ապուր, յե-

տոյ մահոնական համեմով պատրաստուած պաղ ձուկ մը, շանաձկան թեւեր, և կերակուրներ ուրոնք բաւական կը նմանէին քառչուի: Տեսակ մը սունկէ պատրաստուած վառեակի կողիկներ, իւզի և տապակի մէջ խորովուած աղանիւններու հաւկիթներ, ճղմուած ոլոռէ պատրաստուած ոչխարի կարծրեր, ծառերու սունկեր ուրոնք «արծաթի ականջ» կանուանուին, քաղցրահամ խառն պտուղներէ պատրաստուած խոզապուխտ, պարարտ լեւորով իժ մը, ձուկերու աշիքներ, խորովուած բաղ եւ վառեակ, աղցանով ծովու մարս, բաւական ախորժիկի չինական կարկանդակներ, պաքսիմատներ եւ պզտիկ կարկանդակներ, շորովաով պատրաստուած սեր եւ պաղպաղակ: Ամէնքը մէկ առնելով տասն և ութ պնակ, զոր իւրաքանչիւր սեղանակից ունէր իր առջեւ, բարակ կարմիր թուղթի մը վրայ թաւադրուած:

ՎՈԼԹԷՌԻ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԻՐ ՍԷՐԸ

Վոլթէռ մեծին ֆրէտէրիկի հիւրը եղած ժամանակ անոր իշխանուհի քրոջ վրայ սաստիկ սէր կը տածէր զոր չէր համարձակեր կերպով մը յայտնել, բայց երբ օր մը իշխանուհոյն հետ տեսնուած ատեն խօսքը երաշխին տարօրինակութեանը վրայ կը դառնայ՝ այս առթէն Վոլթէռ օգուտ քաղելով՝ «այո, կրտսէ, երազը մոռած ունեւուն արժանացած մէկ հեշտաւետ աշխարհն է, դեռ երէկ դիշեր ես ալ երազիս մէջ թագաւոր եղած եւ իշխանութեանս արժանի վարձատրութիւն մը ըլլալու համար զձեզ սիրած եմ, ո՛հ երանի՜ թէ չարթնայի, զի երբ աչքերս բացի՜ իշխանութիւնս անհետացած էր, միայն թէ այն օրհնէալ երազին յիշատակն եղող ձեր սէրը յաւէտ պիտի մնայ սրտիս մէջ»:

ԿԵՆԴԱՆԱԳԻՐԸ

Գեղանի կին մը գեղեցկագէժ երիտասարդի մը առ ինքն սաստիկ սէր ունենալը շարժուածքէն գուշակելով՝ օր մը զայն փորձելու մոտք կը հարցարնէ այսպէս:


— Երիտասարդութեան ժամանակ բնական է որ մարդ իր սիրոյ առարկայն կուենայ, դուք ալ, որովհետեւ տակաւին երիտասարդ էք, անշուշտ կը սիրէք էակ մը. արդ կը փափաքի՞մ իմանալ թէ, ո՞վ է այն որ ձեզմէ կը պաշտուի:

Երիտասարդը շնորհալի կերպով կը պատասխանէ:

— Տիկին, արդարեւ ջերմագէս կը պաշտեմ

կին մը՝ սրուն տնունը ձեր ներկայութեանը բերանս առնուլ չեմ համարձակիր, բայց եթէ բարեհաճիք հրամայել՝ կրնամ ցոյց տալ ձեզ անոր կենդանագիրը:

Տիկինը կարծելով որ երիտասարդը ուրիշ մը կը սիրէ՝ կենդանագիրը ընդ փոյթ տեսնելու փափաք կը յայտնէ. յայնժամ երիտասարդը գրպանէն ոսկեզօծ շրջանակով հայելի մը կը հանէ, և «ահաւասիկ տիկին, տեսէք իմ պաշտելի նազելւոյ կենդանագիրը» ըսելով հայելին անոր կը յանձնէ:



Բժիշկը. — Ըսէք ինձ, խաթուն, ձեր տղան միշտ թոթովախօս է:

Գեղջուկը. — Ձէ, աօքթօռ միայն խօսած ատենը:

Գործարանատէր. — Կը ցաւիմ որ քեզի գործ չեմ կրնար տալ, հիմա շատ քիչ գործ չունինք:

Գործ փնտռողը. — Հոգ չէ, քիչ թող ըլլայ, արդէն ես ալ շատ գործ չեմ սիրեր:

Մայրը. — Մօ երուանդ ինչո՞ւ համար բանթօղ պատուեցիր:

Տղան. — Մայրիկ, ինկած ատենս ժամանակ չունեցայ հանելու:

Գրագիրը. — Ես այս նամակը իրաւոր չեմ կրնար կարգալ: Շատ դէշ գրուած է:

Տէրը. — Ոչինչ խօսք, նամակը այնքան լաւ գրուած է որ ե՛շ մը անգամ կրնայ կարգալ, տուր որ կարգամ:

Ընկերական գումարման մը մէջ մէկը կը պարծենար թէ ինքը այնքան ճարտար նկարիչ մ'է որ մէկ վրձինով խնդացող տղայ մը լացող տղու մը կրնամ փոխել:

— Ատի վարպետութիւնն է, ըսաւ անդիէն Մենանկիրոս աղուն, ես ալ քուկին քիթիդ բժրնիդ ապտա մը փակցունելու ըլլամ նէ՛ դուն ալ խնդացած ատենդ կուլաս:

Կ Ս Մ Ի Թ

ՇՈՂԱԿԱԹ ՏՈՒՏՈՒՆ Բ. ՆԱՄԱԿԸ

«Մեծապէս շնորհակալ էմ քի իս չի կօրեցիր տէ ըսածներս թէքմիլ կրեցիր: Ես ալ իշթէ քեզի տուած խօսքս պիտոր պոնեմ: Աւագ իրեքշաթի իրիկուն ալ էլայ ժամ իմաստուն կուսանքին կացի: Օլտու օլալը կիտեմ քի ա՛ն իրիկունը տասը ձայնաւոր չօճուխներ իմաստուն կուսանքին պէս մօմերնին վառած, ժամուն օրթան պիտի կան աղւոր աղւոր կարգան. ինչ կըսես, ատանկ բան չեղաւ. չօճուխ ըլլալով Սէրսէմենց հարսին գիրկինէն պաշխան չի կար, ան ալ վառանկ վառանկ կը պոռայ ժամդ աղօթքդ կը խախտէ: Նէ՛ ձայնաւոր կար նէ՛ ալ վարժապետնին: Պահարանը իլէն վերնատունը էբէյի կնիկ—մարդիկ կային, պաշլայեցին վարժապետը բամբասել. մէջերուն մէկը ըսաւ քի «թաղականները իրեք ամիսէն պէրի ալլըխը չեն տուած էղեր»։ ասիկա իմանալու պէս հէմէն տուրս էլայ ժամէն ու աղաներուն օտան կացի: Հոն կէօզլիւքլիւ, շնորհքով հագուած մէկը կար նստէր դիր կը կրեր կոր, ո՛վ ըլլալը ժամկոցին հարցուցի նէ՛ —խօսքը մէջերնիս, անոր ալ վրան կլոխը կը թափի կոր,— «պուրանըն քարտուվարը պու տըր, ըսաւ, պիր սէօյլէյէճէին վարսա օնա սէօյլէ:» Էս ալ աֆ կընես աղաս քեզի պան մը պիտի հարցունեմ՝ ըսի նէ կլոխը վեր առաւ ի՛նչ կուզես մարիկ ըսաւ. «Քա ճանըմ, ատ թէֆթէրներուն մէջը թաղուելնիդ ինչի՞ս ետրամիշ կընէ կոր, ձայնաւոր վարժապետի մը ալլըխը իրեք ամիս է չէք կրնար կոր տար էղեր. իշթէ ա՛ս ո՛չպէպով մարդն ալ ժամ չիդար կոր»։ Հոգի՛, լախըռտըս տահա պերանս էր, մարդը կէօզլիւքին տակէն աչքերը շանախ շանախ պանալով, «ո՛վ ըսաւ քի ձայնաւոր վարժապետին ալլըխը չինք իտար կոր» պուռաց, անկէց սօղրամտան խրըմաթ էլաւ տօլապէն մենծ թէֆթէր մը պերաւ, աճապա կլիտուս պիտի զարնէ ըսի. «Նայէ՛ խաթուն, փետրվարին ալլըխը թէքմիլ առած է. մարտինը կուղէ ամա տահա ամիսը լմնցած չէ քի առնէ»։ Ասկա լսեցի նէ՛ կեցած տեղս փատ կըրեցայ: Թու թխալ թավասիի պէս թուքը պերնիս մէջ չորցաւ: «Աֆ կընես աղաս, պերանս չորնար տէ չի հարցունէի, ըսելս ու ժամ ննտուելս մէկ ըրի. օրդնեալ քեզերուքը ըսեր ու տէրպապաներն ալ խոստովանանքի նստեր էին: Կնիկները տահա կայներ աս վարժապետին վրայ կը խօրաթէին կոր: Կըսէին կոր քի կացած տեղը ըրա՛ւթ չի կենար պան մը կը պծրթկէ եղեր: Առաջ Ըստանպօլ պէյօղուն օս-

կերեւանին ժամն է մտեր, մինտէրը տաքնալուն պէս Ղալաթիա լուսաւորչին ժամը մտեր է. իշթէ զէնկին տեղեր: Հոն ալ տիրիկ չէ ըրեր պաշխա ժամեր աստանդան պտրտեր է. նիհայէթ Գէօսթէնճէ, Պուքրէշ, Սիլիսդրէ, Շոււկա, Էն շատը տեղ մը տարի մը նստեր է թապիյէթին աղւորութենէն, հիմա ալ հոս էկեր է: Բարով էկաւ հազար բարով ամա, շնորհքով կենայ: Խարըշըխնց Մարինոս տուտուն ալ ըսաւ քի հոս գըրպաց Կաս մը կայ էղեր, ծնունդին 10—15 նաբօլէոն ժողուեր, աղւոր շապիքներ շիներ են անկէց սօղրամտան իծծուն հոգի շաբաթը մէյմէկ ֆրանք տալով մենծ հալիդէ մը պէրել պիտի տան էղեր ժամուն համար ամա՛ աս մարդը հետերնին աւրուեր, «ասանկ բաներ աս ժամուն չի վալլեր ըսեր է»։ մարդըցը սիրտը կօրեւուն համար հիմա ժամ՝ չեն իգար կօր էղեր: Քա ճանըմ Մարինոս տուտու, թող անոր չի նային, իրենք դան շապիկ հազնին ըսի նէ՛ ըսաւ քի թող չի տար էղեր քի կարգան, վիրա ինք ու տղաքներուն կարգալ կուտայ. ան մենծ գպիրներն մինակ «ո՛ււ» ընելով տէմ պոնելու ու պօյերնին հալխուն ցուցնելու համար հոն պիտի կայնին:

Ինչ կուզեն նէ ըսեն. Թաղական աղաները անանկ պէսթէնիկեարիէն «ամենայսուրբ» մը ըսէ. ուշախէն ու աղախէն տէրօղորմեա մը պաշլայէ, տէյի վարժապետին պուլաւմիշ ընող մէկ երկու սէս սէվտուլըսիներուն թարաֆ ընելու չէ. ասոնք պարըշարմիշ ընելու է քի ժամ կացողները աղւոր աղւոր շարականները իմանալով միսթարուին ու բուխ սիրտով թապախներուն մէջ փարա ձգեն:

Առջեւնուս շարթուն ալ աւագ Հինգշաբթի, աւագ Ուրբաթի, Խիռուհի իրիկուան ու Զատիկին առտուան տեսնալիք բաներս պիտի իմացունեմ:

Շիտակ զուրցող ՇՈՂԱԿԱԹ

Ա.ԶԴ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ. Ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Անքսանդրոյ «Արաքս» նոլահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2½ ֆրանք: Պուկարիոյ և Ռուժմանիոյ մէջ ստանալ փափագողք գիմելու են մեր խմբագրութեան:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (13)

ՈՐԵՆԵ ՏԸ ԲՕՆ ԺԵ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԿԱՐՄԻՔ-ՄԱՄՈՒՆԸ)



Սոսկումէն շքացած, Սոլ-Պրոտէ չհասկցաւ իսկ այս հարցումը: Գոցած էր աշուրները և գլուխը կուրծքին վրայ էր ձգած: Բայց գրեթէ անմիջապէս ցաւ-գին կոծ մը արձկեց:

Դատաւորին մէկ նշանին վրայ, դահլիճը ձախ ձեռքին մատներուն մէջտեղ մխրձած էր փոքր կարմիր փայտ մը: Ճնշումն այնքան սաստիկ էր որ արիւնը ժայթքած էր ասնջեալին վարդապոյն եղունգներէն:

— Խոստովանեցէ՛ք ոճիրնի՛դ, կրկնեց դատաւորը:

Սոլ-Պրոտէ մտիկ չէր ընէր: Սեւաբիւր եւ արցունքոտ աչքերը չէին կրնար հեռանալ իր արիւնոտ ձեռքէն:

Մէնկ շարժում մը ըրաւ. ներկաները փոքր չոր աղմուկ մը լսեցին և գոհունակութեան վայրագ հուրրաւ մը արձկեցին:

Խեղճ Լիու-Սիուի աչ ձեռքն էր որ, ձախ ձեռքին պէս, կը խորտակուէր երկաթէ շեղբերուն մէջ:

Բայց հեծին մը իսկ չարձկեց: Նուապած էր:

Բժիշկ մը մօտեցաւ անոր, ազդու կաշգուրիչ մը խմցուց և Սոլ-Պրոտէ շուտով սթափեցաւ, գուցէ հիմակ աւելի սաստիկ տանջուելու համար քան առաջ: Իր ֆիզիքական չարչարաններուն վրայ պիտի աւելնար բարոյական սոսկալի վիշտ մը:

Առաջին ակնարկը զոր օլորդ Լիու իր շունջն արձկած էր, կեցած էր պատգարակի մը վրայ զոր երկու ոստիկաններ զրած էին դատարանին գահաւանդին տակ, և այս պատգարակին վրայ, ճանչցած էր Ի-թէն՝ հակառակ հանդերձներուն խոսնակութեանը եւ գիմա-գըճերուն այլալուծեանը:

Իէնկ-թա-Լանկի գիակին գտնուելուն գիշերն իսկ այս վերջնոյն մարմնոյն տակէն գտնուած հովահարին շնորհիւ եւ զարմուհիին տուած տեղեկութեանը վրայ ձերբակալուելով, երիտասարդ գրագետը պատմած էր՝ զոհին հօրը հետ Միի մեհտանին մէջ ունեցած տեսակցութիւնը, ինչպէս նաեւ իր ըրած ամուսնական առաջարկը:

Կուրօրէն խոստովանած էր իր անցեալ սէրը զարմուհիին վրայ եւ Լէնկի ամարանոցն իր ներկայութիւնը

սպանութեան գիշերը, բայց որովհետեւ ազդուապէս եւ զարոյթով մերժած էր փեսին սպանութեան մէջ ու եւ է մանակցութիւն, տանջանքի ենթարկուած էր եւ հոն կը պառկէր՝ իր դատաւորներուն առջեւ, սրունգները երկաթէ աքցաններով խորտակուած և կողերը՝ պամպուի հարուածներէ պատառուած:

Ա՛լ այնուհետեւ Սոլ-Պրոտէ չմտածեց իր ցաւերուն վրայ, այլ միմիայն այն ցաւերուն զօրս իր դժբախտ աղգականը կը պարտէր իր սիրուն, եւ որովհետեւ դատարան հասած պահուն մանկամարդ աղջկան արձկած աղաղակէն Ի-թէ ճանչցած էր զայն եւ անոր դարձած էր, երկար ակնարկ մը փոխանակեցին որուն մէջ իւրաքանչիւրը նոր քաջութիւն մը գտաւ տանջանքին դէմ մաքառելու համար:

Բազմութեան անյագ հետաքրքրութիւնը մանկամարդ կնոջմէն դարձած էր ամբողջովին կիզրոնանալու համար Ֆօր կրօնաւորին վրայ զոր իր պաշտօնակիցներէն մէկը յօնձն առած էր պաշտպանել, վասն զի Չինաստանի մէջ, այս երկիրը զոր բարբարոս կանուանենք, այլ ուր ամենէն խեղճը գիտէ կարգաւ ու գրել, փաստաբան չիկայ: Ամբաստանեալի մը ամեն բարեկամ իրաւունք ունի անոր համար ջատագով կանգնելու:

Բայց ոչ դք մտիկ կընէր այն որ Ի-թէի և Լիու-Սիուի անմեղութիւնն ապացուցանելու ծանր պաշտօնը ստանձնած էր:

Ունկնդիրներուն համար, ինչպէս նաեւ դատարանին համար, անոնց ոճիրն ակներեւ էր ու անփիճելի: Կրօնաւորն ի զուր յիշեցուց իր երկու պաշտպանեալներուն առաքինի երիտասարդութիւնն և նոյն իսկ իրենց վրայ ծանրացող չարիքը գործելու անկարողութիւնն, ի զուր ջանաց վկայութեան կանչել աղախիններ որք այդ աղետալի գիշերը հանուեցուցած էին իրենց նոր տիրուհին եւ դատաւորներուն գթութիւնը խնդրեց. այս վերջիններուն կարծիքը որոշուած լմնցած էր:

Յայտնի էր թէ անոնք ոչ նուազ անհամբու-թեամբ քան հասարակութիւնը՝ կը սպասէին պաշտպանողական ճառին վերջանալուն:

Ուստի ատենաբանը հազիւ վերջացուցած էր իր խօսքը երբ Մէնկ նորէն սկսաւ խօսիլ:

— Չեր դատաւորները լսեցին ի նպաստ ձեզ դէմ եղած ջատագովութիւնը, ըսաւ այս անգամ Ի-թէին դառնալով, բայց բան մը չկրցաւ անոնց համոզումը խախտել: Անոնց համար, դուք յանցաւոր էք ինչպէս նաեւ ձեր մեղսակցուհին: Սակայն օրէնքը կը հրամայէ ինձ, վճիռս արձկելէ առաջ, ամեն բան փորձել ոճրին խոստովանութիւնը ձեր բերնէն խլելու համար: Կուզէ՞ք

յայտնել գատարանին թէ ի՞նչպէս լէնին-թա-լանդը ձգեցիք այն թակարդին մէջ ուր իր մահը գտաւ:

— Ինչպէս Սոլ-Պրոտէն, ես ալ անմեյ եմ. հեծեց տիկին Լիուի եղբորորդին սիրալիր երկար ականակ մը նետելով իր ընկերուհիին վրայ: Իմ նախնիքներուս յիշատակին վրայ կերպնում:

— Հայհոյանք մըն ալ մի՛ աւելցունէք ձեր անամոթութեան վրայ, ընդմիջեց նախագահը խիստ ձայնով մը, եւ բանի որ կը մերժէք խօսիլ, պիտի տեսնենք թէ ձեր մարմինը պիտի այնքան դիմաւոր չարաչարների որքան ձեր հոգին ըմբոստ է խղճի խայթի: Թող օրէնքն ի գործ տրուի:

Այս հրամանին վրայ որ իրեն կուգուէր, դահիճը Ի-թէի ճակտին անցուց երկաթէ շրջանակ մը որ ըստ կամս կրնար նեղնալ՝ պտուտակի մը միջոցով:

Ամբոխը, անողորմաբար հետաքրքիր, ձայն ձուն չէր հանէր, այնքան կը վախնար կորսնցունել սոսկալի տուամին տեսարաններէն մէկը, որ իր առջեւ տեղի կուտենար:

Սոլ-Պրոտէ սեւեռաբիր ականակով կը հետեւէր այս պատրաստութիւններուն: Կենթադրէր որ սոսկալի բան մը տեղի պիտի ունենար, բայց ի զուր կը ջանար հասկնալ:

— Վերջին անգամ մըն ալ կըսեմ, կուգէ՞ք խոստովանիլ ձեր ոճիրը, հարցուց Մէնկ, որուն հեղուկ դիմագծերը բուռն յոյզ կը ցոլացնէին:

— Բան մը ըսելիք չունիմ: Պուտտան ողորմի ինծի, պատասխանեց գրագէտն հաստատ ձայնով մը:

Հաղիւ արտասանած էր այս խօսքը, դէմքը դիակի գոյն առաւ եւ կցկտուր հեծիւն մը խուսափեցաւ շուրթերէն:

Տանջողը առաջին շրջան մը ընդ տուած էր պտուտակին. երկաթէ շրջանակը սեղմուած էր ամբաստանեալին գլխուն շուրջը:

Այս դժոխային ու անողորմ սեղմում իր բունբերուն վրայ եւ իր ճակտին վրայ անագորոյն չարաչարներ կը պատճառէր անշուշտ:

Ունկնդիրները սթափած էին իրենց լուծիւնէն՝ ծափահարելու համար, բայց գահաւանդէն այս գարշելի տեսարանին ներկայ գտնուող եւրոպացիները գլուխն անդին չը դարձունէին սոսկումով:

Իր անձնական ցաւերը մոռնալով, Սոլ-Պրոտէ առաջ նետուած էր: Յայտնի էր որ խօսիլ կուգէր, բայց հեծեմանքները կը խեղդէին իր խօսքերը:

— Կուգէ՞ք ոճիրնիդ խոստովանիլ, կրկնեց նորէն մանտարները որուն ձայնը կը դողդղար զայրոյթէ եւ մոլորումէ:

Ի-թէ համակութեամբ լի բացասական շարժումով մը պատասխանեց:

Դահիճը նորէն դարձուց պտուտակը եւ մարտիրոսին դէմքը յանկարծ ամենասոսկալի կերպարանափոխում մը կրեց:

Այտները մէկէնիմէկ փորուած էին իբր թէ յանկարծ նիհարցած ըլլային. տարապայման բաց աչքերը խնդի հայիացք ունէին, եւ արիւնը իր ընդլայնուած սնգունքներէն կը վազէր ձերմակ ակամներուն վրայ, պոյս այլանդակ կծկումով մը վեր ելած լինալով կը ցուցունէին իրարու գամուած:

— Հնո՛րհ, հեծեց անմիջապէս Լիու-Սիու գերագոյն ջանքով մը. հնո՛րհ, տէր գատաւոր, կը խոստովանիմ:

Մէնկ նշան մը ըրաւ, Ի-թէի գլուխը խորտակող երկաթէ շրջանակը թուլցաւ, եւ խեղճը, վիրաւոր, արիւնլուայ, անկենդան, խորդալով ինկած էր պատգարակակին վրայ որ այդպէս եղած էր իր տանջանքի անկողինը:

— Այո, կը խոստովանիմ, շարայարեց, առանց իսկ հարցափորձուիլ սպասելու՝ գորովագեղ աղչիկը, որ աչքը չէր զատեր մօրեղբորորդիէն, ամեն բան կը խոստովանիմ: Ես սպանեցի ամուսինս՝ մեռուցէք զիս, բայց չը նորհանոր համար:

(Շարունակելի)

ԳԵՂՈՒՆԻ

Վենետիկի Մխիթարեան Հարց Պատ. Միաբանութիւնը այս անգամ ալ կուտայ մեզ ԳեղՈՒՆԻ անունով պրակ մը, որ ՈՐԲՈՒՆԻ եւ ուրիշ նմանօրինակ ճաշակաւոր հրատարակութեանց պէս կուգայ գեղազարդել մեր թանգարանները: Սոյն պրակին մէջ կը տեսնուին գունաւոր եւ գեղատիպ պատկերներ ու շահեկան յօդուածներ: Շքեղին ու ճաշակաւորին սիրահարը ունենալու է սոյն պրակը:

Կը ծախուի 2, 50 ֆրանք. դիմել ի Վենետիկ Ս. Ղազարու վանքը, եւ կամ ի Պուլկարիա Ա. Զարպհանէլեան գրատունը, Վառնա:

Печатница „Взаимность“ — Варна